ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1391 06.12.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն. Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը իր ուսումնասիրությունների արդյունքում պարզել է, որ ՀՀ –ում գործող ոչ մի ՁՊՎ-ում չի ապահովում ՀՀ կառավարության 05.06.2008թ-ի թիվ 574-Ն որոշմամբ սահմանված 66-րդ կետի պահանջները: Մասնավորապես նշված դրույթով կառավարությունմը նախատեսել է, որ ՀՀ –ում գործող բոլոր ՁՊՎ-ներում ոստիկանության բաժնի պետերի / իսկ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ի պետը/ պետք է սահմանեն ՁՊՎ-ում հեռախոսազանգից օգտվելու ժամանակացույցը:

Ելնելով վերոգրյալից, խնդրում ենք նշել, ներքին կանոնակարգի 66-րդ կետի պահանջի չպահպանման պատճառները:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄ
ՍՏԻՑ № 5227
10. 12. 13

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝

ՀՀ Ոստիկանության Հաս. հանձնաժողով
Մուտք թիվ 8323
10. 12. 2013թ.

Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1- 3661 <<25>> 12 2013թ.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ

Համիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

ՀՀ ոստիկանությունում քննարկվել է Ձեր 06.12.2013թ. թիվ 2621/1391 գրությունն, որի կապակցությամբ տրվում է հետևյալ մեկնաբանությունը.

ՀՀ ոստիկանության համակարգում գործող ՁՊՎ-ներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ՁՊՎ-ներում պահված անձանց կողմից տեսակցությունից հրաժարվելու և այն հեռախոսազրույցով փոխարինելու վերաբերյալ գրավոր դիմումներ չեն ստացվել՝ հետևաբար հեռախոսազրույցների ժամանակացույց կազմելու անհրաժեշտություն չի առաջացել:

Միաժամանակ հայտնվում է, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչություններին տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ նմանատիպ դիմումներ ներկայացնելու դեպքում կազմել հեռախոսազանգից օգտվելու ժամանակացույց՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 65-րդ և 66-րդ կետերի պահանջներով:

ՀՀ ոստիկանության շտաբ